CPV 50111130

# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N1

ք. Գավառ 11.03.2020թ.

<<Գավառի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մյուս կողմից Վալերի Իռնանով Ա.Ձ-ի, ի դեմս տնօրեն Վ. Իռնանովայի, այսուհետ «Կատարող», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար: 1.2 Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները` **<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ին պատկանող մեքենաների վերանորոգման ծառայություններ**, այսուհետ` «Ծառայություններ»:

1.3. Աշխատանքների կատարման ժամկետն է` 25.12.2020 թ.

1.3.1. ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից

**2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները**

2.1 Կատարողը պարտավոր է

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում կամ ժամկետից շուտ` Պատվիրատուի համաձայնությամբ.

2.1.3. Պատվիրատուի պահանջով 5 օրացուցային __օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները.

2.2. Պատվիրատուն պարտավոր է վճարել կատարողի կողմից ներկայացրած հաշիվ ապրանքագրերով նշված գնին համապատասխան. Ծառայությունների հանձնման- ընդունման ակտի ստորագրման պահից 5 օրվա ընթացքում

2.3. Պատվիրատուն իրավունք ունի`

2.3.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը` առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. մինչև ակտի ստորագրումը` ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց` Կատարո-ղին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից հրա-ժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

**3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը**

3.1 Սույն պայմանագրի գինը կազմում է` 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

**4. Կողմերի պատասխանատվությունը**

4.1 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված Ծառայությունների մատուցման կամ 3.2 կետում նշված վճարման ժամկետների խախտման համար խախտող կողմը մյուս կողմին վճարում է տուգանք` պայմանագրի արժեքի 0.5 տոկոսի չափով և տույժ` կետանցի յուրաքանչյուր օրվա համար 0.05 տոկոսի չափով:

4.2 Տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

**5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կող-մերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադա-րեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահման-ված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**6. Վեճերի լուծման կարգը**

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:

**7. Եզրափակիչ դրույթներ**

7.1 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները նրա անբաժա-նելի մասն են:

7.2 Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

*Պատվիրատու*

ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 21
«Ակբա կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ
Գեղարքունիք մ/ճ
Հ/Հ 220085140329000
ՀՎ[illegible]
Տնօրեն Ա. [illegible]

Կատարող

Վալերի Իռնանով Ա.Ձ
ք. Գավառ Հացառատ թաղամաս
ՎՏԲ Հայաստան բանկ Կամո մ/ճ
2216021026851400

ՀՎՀՀ 74335493
Տնօրեն Վ. Իռնանով